

Հաստատված է Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2012թ. հոկտեմբեր 31-ի նիստում

Ռեկտոր՝

Ռուբեն Միրզախանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԵՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳ

1. Ատենախոսության թեմայի հաստատման գործընթացում ղեկավարվել
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի
(այսուհետ՝ ՀՀ ԲՈՀ) «Ատենախոսության թեմայի հաստատման կարգը» և
«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում
ուսուցման կարգ» որոշումներով:

2. Սահմանել, որ՝

2.1. անձին որպես հայցորդ ձևակերպելիս, հայցորդի ատենախոսության թեման
հաստատելուց հետո, համապատասխան ամբիոնը ողջամիտ, սակայն վեց ամիսը
չգերազանցող ժամկետում կրկին քննարկում է ատենախոսության թեման՝
եզրակացությամբ վերահաստատելով (կամ փոփոխելով) այն, ներառյալ՝ թեմայի
համապատասխանությունը ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը, թեմայի
անվանումը, թեմայի մասնագիտական ուղղվածությունը (գիտության բնագավառը և
մասնագիտությունն ըստ աստիճանաշնորհման անվանացանկի):
Եզրակացությունում նշվում են նաև թեմայի հետագույն լինելու աստիճանը,
նորությունը, արդիականությունը, կիրառական նշանակությունը:

Թեման ամբիոնում վերահաստատելու (փոփոխելու) հետ մեկտեղ ՀՀ ԲՈՀ-ի
կողմից սահմանված կարգով և պահանջների պահպանմամբ վերահաստատվում
կամ փոխարինվում է ատենախոսության գիտական ղեկավարը:

Ամբիոնի եզրակացությունը կցվում է հայցորդի և թեմայի գիտական ղեկավարի
ստորագրությամբ վավերացված թեմայի հիմնավորումը:

2.2. Համահամալսարանական ամբիոնի պարագայում ամբիոնի որոշման
մանրամասն քաղվածքը (որում արտացոլված է նաև ամբիոնի եզրակացությունն
ամբողջությամբ) և թեմայի հիմնավորումը փաստաթղթային և էլեկտրոնային
կրիչների վրա ամրագրված տարբերակներով ողջամիտ, սակայն 15 օրը
չգերազանցող ժամկետում փոխանցվում են Համալսարանի գիտական խորհրդին

առընթեր ուսումնագիտամեթոդական Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քննարկմանը, և ներկայացվում են Համալսարանի ասպիրանտուրայի բաժին՝ համապատասխան հաշվառում կատարելու և տվյալների շտեմարան վարելու նպատակով:

Համահամալսարանական չհամարվող ամբիոնի պարագայում ամբիոնի որոշման մանրամասն քաղվածքը (որում արտացոլված է նաև ամբիոնի եզրակացությունն ամբողջությամբ) և թեմայի հիմնավորումը ներկայացվում են համապատասխան ֆակուլտետի խորհրդի քննարկմանը: Այս դեպքում, ֆակուլտետի խորհուրդը ողջամիտ, սակայն երկու ամիսը չգերազանցող ժամկետում քննարկում է ատենախոսության թեման և գիտական ղեկավարի թեկնածությունը հաստատելու վերաբերյալ ամբիոնի որոշումը և կայացնում է համապատասխան որոշում ատենախոսության թեման և գիտական ղեկավարի թեկնածությունը հաստատելու վերաբերյալ: Կարծիք ձևավորելու և (կամ) ճշտումներ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, ֆակուլտետի խորհրդի պաշտոնական քննարկումներին կարող են նախորդել աշխատանքային քննարկումներ իրավասու անձանց հետ:

Ֆակուլտետի որոշման քաղվածքը, որին կցվում են ամբիոնի համապատասխան փաստաթղթերը փաստաթղթային և էլեկտրոնային կրիչների վրա ամրագրված տարբերակներով ողջամիտ, սակայն 15 օրը չգերազանցող ժամկետում փոխանցվում է Համալսարանի Հանձնաժողովի քննարկմանը, և ներկայացվում են Համալսարանի ասպիրանտուրայի բաժին՝ համապատասխան հաշվառում կատարելու և տվյալների շտեմարան վարելու նպատակով:

2.3. Հանձնաժողովը ողջամիտ, սակայն երեք ամիսը չգերազանցող ժամկետում, քննարկում է ատենախոսության թեման և գիտական ղեկավարի թեկնածությունը Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու հարցը:

Կարծիք ձևավորելու և (կամ) ճշտումներ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովի պաշտոնական քննարկումներին կարող են նախորդել աշխատանքային քննարկումներ իրավասու անձանց հետ:

2.4. Թեմայի և (կամ) գիտական ղեկավարի թեկնածության վերաբերյալ ՀՀ ԲՈՂ-ի կողմից սահմանված ձևական իրավական պահանջներին համապատասխանելու, ինչպես նաև թեմայի հիմնավորման և համապատասխան եզրակացության վերաբերյալ քննարկումների արդյունքում, Հանձնաժողովն իր եզրակացությամբ նյութերը փոխանցում է Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարին՝ Համալսարանի գիտական խորհրդում ատենախոսության թեման և ատենախոսության գիտական ղեկավարին հաստատելու հարցը քննարկելու համար:

2.5. Քննարկումների արդյունքում ատենախոսության թեման և (կամ) ատենախոսության գիտական ղեկավարի թեկնածությունը չհաստատելու մասին որոշում կայացնելու դեպքում, այդ որոշումը կայացնող՝ սույն Կարգով իրավասու համարվող մարմինը, կազմում է եզրակացություն, որում պետք է արտացոլվեն նման որոշում կայացնելու հիմքերն ու հիմնավորումները: Ամեն դեպքում, հայցորդի և

ատենախոսության գիտական ղեկավարի գրավոր խնդրանքի առկայության դեպքում հարցի քննարկումը փոխանցվում է Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

2.6. Ամբիոնը և ֆակուլտետն իրենց իրավասության շրջանակում պատասխանատու են հայցորդի մասնագիտական պատրաստվածության, թեմայի նորության, կիրառական նշանակության, արդիականության և ԲՈՀ-ի կողմից սահմանված ձևական իրավական պահանջների պահպանման համար:

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակում պատասխանատու է ատենախոսության թեմայի նորության, կիրառական նշանակության, արդիականության և ԲՈՀ-ի կողմից սահմանված ձևական իրավական պահանջների պահպանման համար:

2.7. Հարցը Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը նախապատրաստելու կարգը որոշում է Համալսարանի գիտական խորհրդի նախագահը:

2.8. Ատենախոսության թեման և(կամ) գիտական ղեկավարը հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: Համալսարանի գիտական քարտուղարը պատասխանատու է հաստատված ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների գրանցամատյանը ճշգրիտ և պատշաճ վարելու համար, որի ձևաչափը և վարելու կարգը սահմանվում է Համալսարանի ռեկտորի կողմից: Գրանցամատյանի փաստաթղթային և էլեկտրոնային կրիչների վրա ամրագրված տարբերակը մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-ը փոխանցվում է Համալսարանի գիտության և հետբուհական կրթության գծով պրոռեկտորին:

2.9. Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ հաստատված ատենախոսության թեմայի և (կամ) գիտական ղեկավարի փոփոխության հարցը քննարկվում է սույն կարգով որոշված ընթացակարգով: Այդ դեպքում եզրակացությունում պետք է արտացոլվեն փոփոխության հիմնավորումները:

Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ հաստատված ատենախոսության թեմայի խմբագրական կամ լեզվաոճական բնույթի փոփոխության հարցը քննարկվում է արագացված ընթացակարգով՝ համապատասխան պարզաբանման առկայության դեպքում:

3. Սույն կարգը տարածվում է նախկինում ձևակերպված հայցորդների ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների վերաբերյալ ընդունված որոշումների վրա այն փուլից, որում գտնվում է ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման գործընթացը:

4. Սույն որոշման կատարման համակարգումն ու հսկողությունը վերապահել Համալսարանի գիտության և հետբուհական կրթության գծով պրոռեկտորին: